ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փամբակ համայնքի սիրելի բնակիչներ, մայիսի 18-ը Թանգարանների միջազգային օրն է:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ թանգարաններն զբաղեցնում են իրենց կարևոր տեղը: Դրանք այն կարևոր օղակներն են, որոնց միջոցով սերունդներին է փոխանցվում ժողովրդի պատմամշակութային արժեքներն ու մշակույթը՝ ամփոփված պարզ կենցաղային իրերի և հազարամյակների պատմություն ունեցող գտածոների մեջ:

Փամբակ համայնքի միակ Երկրագիտական թանգարանը հիմնադրվել է 2008 թվականին Մարգահովիտ բնակավայրում՝ նպատակ ունենալով հավաքել, պահպանել և ապագա սերունդներին փոխանցել պատմամշակութային արժեք ունեցող, տեղական մշակույթը և ավանդույթները ներկայացնող նմուշներ Մարգահովիտ բնակավայրից և հարակից շրջաններից:

Տոնի առթիվ շնորհավորում եմ այն բոլոր անհատներին, ովքեր ունեցել են իրենց ներդրումը Թանգարանի ստեղծման և պահպանման գործում:

Անգնահատելի են ձեր ջանքերը մեր ազգային արժեքների պահպանման և փոխանցման գործում, ուստի ցանկանում եմ ձեզ ուժ, եռանդ և ազգանվեր գործելու անսահման կարողություն:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան